ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «10» սեպտեմբերի, 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 23-Ա/Ք

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ - 2015» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թ. հունիսի 30-ի N 636-Ա/Ք հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի եզրակացությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տ.Գալստյան)՝ գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2015 թ. սեպտեմբերի 1-ից:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2015 թ. սեպտեմբերի 10-ի
N 23 Ա/Ք հրամանի

Ցանկ

«Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2015» մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների

N/N	Թեմայի ծածկագիր	Թեմայի ղեկավար	Թեմայի վերնագիր	Կազմակերպության անվանում
1	15SH-006	Արզումանյան Ալեքսան Մկրտչի	Կորունդե թիթեղներից բարձր մաշակայունության կտրող գործիքների մշակում	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղ
2	15SH-007	Մամիկոնյան Բորիս Մամիկոնի	Ֆիզիկական մեծությունների միկրոկոնտրոլերային չափիչների մշակումը չափման ճշգրտության բարձրացման կառուցվածքային-ալգորիթմական մեթոդի կիրառումով	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղ
3	15SH-008	Դրմեյան Հենրիկ Ռուբենի	Բյուրեղային նյութերում կառուցվածքային արատների հայտնաբերման նոր ռենտգենադիֆրակցիոն մեթոդների և տեխնիկական միջոցների մշակումը	ՀՀ ԿԳՆ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ
4	15SH-010	Հարությունյան Համիկ Հայկի	Կարս-Ալեքսանդրապոլ. աշուղական ավանդույթներ և փոխառնչություններ	ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
5	15SH-016	Եգանյան Լարիսա Գրիշայի	Ախուրյանի ավազանի ամրաշինական կառույցները	ՀՀ ԳԱԱ «Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ